

Մատղաշների վիրուսային պենևոնտերիտներ

Վիրուսային ծագման ինֆեկցիոն հիվանդությունների խումբ է, որը հաճախ համակցվում է պայմանական ախտածին մանրէներով, միկոպլազմաներով, խլամիդիաներով և այլ մակրոօրգանիզմներով, առաջացնելով շնչառական և մարսողական ուղիների ախտահարումներ:

Տարածվածությունը: Մատղաշների վիրուսային պենևոնտերիտները մեծ տարածում են գտել հատկապես զարգացած արդյունաբերական անասնապահական երկրներում:

Հարուցիչները: Հիվանդության առաջացմանը որոշակի մասնակցություն են ցուցաբերում ադենա-, պարվո-, էնտերո-, կորոնա- և պարամիքսովիրուսները: Նրանցից ռոտա-, էնտերո-, կորոնա և պարամիքսովիրուսները պարունակում են ՌՆԹ, իսկ ադենա- և պարվովիրուսները ԴՆԹ: Շնչառական և մարսողական համակարգի ախտահարումներով հիվանդ կենդանիներից վիրուսները անջատում են և վերարտադրում տարբեր բջջային աճեցվածքներում և հավի սաղմում:

Առանձին ընտանիքների սեռերի վիրուսները օժտված են տարբեր հակածիններով: Այսպես, հայտնի են խոշոր եղջերավոր անասունների ադենավիրուսների 9 և խոզերի նույն վիրուսների 4 շճաբանական տիպեր, իսկ էնտերովիրուսների համապատասխանաբար 8 և 10 շճաբանական տիպեր: Հայտնի են նաև ընդհանուր խմբակային հակածնով օժտված վիրուսներ: Այդպիսի ընդհանուր հակածին ունեն խոզերից, խոշոր եղջերավոր անասուններից, ինչպես նաև մարդկանցից անջատված ռոտավիրուսները: Նույնը վերաբերվում է նաև խոշոր եղջերավոր անասունների, խոզերի և բադերի ռոտավիրուսներին:

Համաճարակաբանական տվյալները: Մատղաշ կենդանիների շնչառական և մարսողական համակարգերի վիրուսային հիվանդությունները հաճախ արձանագրվում են բազմապիսի ստրեսային գործոնների ազդեցությունից, երբ միանգամից փոխվում են նրանց պահվածքի պայմանները, խախտվում են կենդանիների կերակրման և շահագործման անասնաբուժասանիտարական և համաճարակաբանական նորմերը: Կարևոր նշանակություն ունի նաև տարբեր տնտեսություններից ձեռք բերված մատղաշների խմբավորումները: Նշված հիվանդությունների հարուցիչները սովորաբար գաղտնի ձևով շրջապտույտ են կատարում հասակավոր կենդանիների մեջ: Ինֆեկցիոն այդպիսի ձևը չի դրսևորվում կլինիկական նշաններով, այլ ընթանում է ներապարատային ձևով: Ուստի, տնտեսություններից հավաքված մատղաշների խմբավորման դեպքում կատարվում է

ինֆեկցիաների հարուցիչների փոխանակություն և նրանց ակտիվացում: Խնամքի և պահվածքի նոր պայմանները, անասնաբուժասանիտարական լարված մշակումները, ինչպես նաև պայմանական ախտածին մանրէներով բազմաթիվ փոխվարակումները նպաստում են ինֆեկցիաների բռնկմանը և համաճարակի տարածմանը: Շնչառական և մարսողական ուղիների վիրուսային հիվանդությունների համաճարակի ինտենսիվությունը առանձին դեպքերում կարող է հասնել 90-100%-ի: Երկրորդային ինֆեկցիաների կասեցմանն ուղղված բուժ կանխարգելիչ միջոցառումներով հնարավոր է կենդանիների անկումները նվազեցնել մինչև 4-8%-ի:

Ախտաճնությունը: Շնչառական ուղիների վիրուսները մատղաշների օրգանիզմ են թափանցում վերին շնչառական ուղիների և թոքերի լորձաթաղանթների էպիթելի միջոցով: Բազմանում և առուջացնում են այդ ուղիների բորբոքումներ, որի պայմաններում ակտիվանում են մանրէական ինֆեկցիաների հարուցիչները, մասնավորապես պաստերելաները, սալմոնելաները, էշերիխիաները, ստրեպտակոկկերը, ինչպես նաև խլամիդիաները և միկոպլազմաները: Նորածին կենդանիների էնտերիտները, որոնք հարուցվում են ռոտա-, կորոնա-, ռեո-, պարվո-, էնտերո- և ադենավիրուսներով, ուղեկցվում են բարակ աղիքների լորձաթաղանթների էպիթելային բջիջների թավիկների ախտահարումներով՝ սնման խանգարումներով, մեռուկացումով և նրանց քայքայումով: Աղիքների լորձաթաղանթների թավիկների հետաճման արդյունքում խանգարվում է նյութափոխանակությունը, զարգանում է դիարեան և օրգանիզմի ջրազրկումը:

Ընթացքը և նշանները: Ադենավիրուսներով և ռեովիրուսներով հարուցվող շնչառական ուղիների ախտահարման նշանները հիմնականում նույնն են և ինֆեկցիան դրսևորվում է թեթև ընթացքով ու առանց կլինիկական նշանների: Խառը վիրուսային կամ վիրուսային և մանրէական վարակների հարուցիչների ասոցիացիայի դեպքում հիվանդությունը ընթանում է ծանր ձևով: Այս դեպքում հիվանդության գաղտնի շրջանը տևում է 2-7 օր, որից հետո նկատվում է մարմնի ջերմաստիճանի բարձրացում, կենդանիները ընկճված են, քթանցքներից և աչքերից հոսում է ճճալորձային էքսուդատ, հազում են, շնչառությունը դժվարացած է, դրսևորվում է թոքերի ախտահարման համալիր նշանները: Հնարավոր է նաև միաժամանակ հիվանդության էնտերիտային ձևը, որը հանգեցնում է կենդանիների անկման:

Եթե հիվանդությունը հարուցվել է կորոնա- և ռոտավիրուսներով, ապա գաղտնի շրջանի տևողությունը զգալիորեն կրճատվում է և կազմում մի քանի ժամից մինչև 2-3 օր: Այս դեպքում ինֆեկցիան բնորոշվում է կենդանիների ընկճվածությամբ, արտահայտված դիարեայով և օրգանիզմի ջրազրկումով: Պարվովիրուսային ինֆեկցիայի դեպքում

ախտածնային պատկերը ավելի լայն է: Բացի մատղաշների ստամոքսաաղիքային ուղիների ախտահարումից, կովերի մոտ նկատվում են վիժումներ, իսկ խոզերի մոտ բազմապիսի նշաններից առանձնացվում են վիժումները կամ անկենսունակ և դիարեայով հիվանդ խոճկորների ծնվելը:

Ախտաբանա-անատոմիական փոփոխությունները: Մատղաշների վերին շնչառական ուղիների և բրոնխների լորձաթաղանթները ենթարկված են կատառային բորբոքման: Թոքերի ախտահարումները հիշեցնում են պնևմոնիային բնորոշ բոլոր դրսևորումները, որի դեպքում առանձնացվում են տարբեր հատվածների կարմիր և գորշ լյարդացումը, թոքերի պնդացումը, առանձին բլթերի ատելեկտազը և էմֆիզեման, միջբլթակային շարակցական հյուսվածքի այտուցավորումը, թոքամիզի խոռոչում շճաֆիբրինոզային էքսուդատի առկայությունը: Կրծքի վանդակի ավշային հանգույցները այտուցված են և մեծացած:

Էներիտային ձևի դեպքում դիտվում է բարակ աղիքների լորձաթաղանթների կատառային բորբոքում, արյունալեցում, այտուցավորում, տեղ-տեղ արյունազեղումներ և քերծվածքներ, որովայնամիզային ավշային գեղձերի մեծացում և այտուցավորում:

Ախտորոշումը: Քանի որ վիրուսային ինֆեկցիաներով հարուցվող ստամոքսաղիքային ուղիների և թոքերի ախտահարումները չեն դրսևորվում յուրահատուկ նշաններով, այդ կապակցությամբ էլ ախտորոշումը կապված է որոշակի դժվարությունների հետ: Կլինիկա-համաճարակաբանական և ախտաբանա-անատոմիական տվյալների հետ միասին դիմում են ախտորոշման հիմնական՝ լաբորատոր հետազոտության մեթոդին, որի դեպքում օգտագործում են վիրուսաբանական, մանրէաբանական, շիճուկաբանական և կենսաբանական մեթոդները: Առաջին հերթին պետք է անջատել վիրուսը և այն տարբերակել: Կատարում են նաև ռետրոսպեկտիվ ախտորոշում, որի դեպքում հիվանդ և հիվանդացած ու առողջացած կենդանիների արյան շիճուկում հայտնաբերում են համապատասխան հակամարմիններ: Ախտորոշման ժամանակ անհրաժեշտ է միշտ հաշվի առնել վիրուսային և մանրէական, ինչպես նաև միկոպլազմային և խլամիդիոզային ինֆեկցիաների հարուցիչների ասոցիացիաները:

Բուժումը: Մատղաշների վիրուսային պնևմոնիտերիտների դեպքում բուժումը կատարում են ըստ հիվանդության նշանների: Երկրորդային ինֆեկցիաների հարուցիչներին ակտիվազրկելու նպատակով օգտագործում են հակաբիոտիկներ և հակամանրէական այլ պատրաստուկներ:

Իմունիտետ: Պայմանական ախտածին վիրուսային ինֆեկցիաներով հիվանդացած և առողջացած կենդանիների արյան շիճուկում հայտնաբերվում են օրգանիզմի

առանձնահատուկ անընկալունակությունը պայմանավորող վիրուս չեզոքացնող հակամարմիններ: Քանի որ հիվանդության հարուցիչները օժտված են բազմաթիվ հակաձիններով, այդ կապակցությամբ առանձնահատուկ կանխարգելման միջոցները մշակված են միայն առանձին ինֆեկցիաների նկատմամբ:

Կանխարգելումը և պայքարի միջոցառումները: Անհրաժեշտ է վերացնել այն բոլոր ստրեսային գործոնները, որոնք նպաստում են մատղաշների պնևմոնէտերիտների առաջացմանը: Այն տնտեսություններում, որտեղ արձանագրվում են մատղաշների պնևմոնիա և դիարեա, պետք է խուսափել այդ տարածներից կենդանիների ներմուծումը նախրի համալրման համար:

Անապահով տնտեսություններում հիվանդ կենդանիներին առանձնացնում են և բուժում: Կարգավորում են նորաձինների կերակրման, խնամքի պայմանները, սահմանված կարգով կատարում են ախտահանություններ: